



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08

05

22

«-----» ----- 2013թ.

Թիվ -----

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ  
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, ընդառաջելով Ոսկան Խաչատրյանի /դիմում թիվ Խ-485, 04.04.2013թ./ և Ա.Ղազարյանի /դիմում թիվ Ղ-637, 30.04.2013թ./ խնդրանքին .

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 123 ա հասցեում գտնվող Ոսկան Խաչատրյանի տնամերձ հողամասի ճակատային մասին կից 56,9 քմ մակերեսով բնակավայրի այլ հողամասի գործառական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման նշանակության հողամասի և քանի որ այդ հողամասը հնարավոր չէ օտարելու որպես առանձին գույքային միավոր, թույլատրել ողղակի վաճառքի կարգով, ընդլայնելու նպատակով օտարելու Ոսկան Խաչատրյանին:
2. Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 117 ա հասցեում գտնվող Արթուր Ղազարյանին պատկանող առևտրի սրահի շենքի ճակատային մասին կից 50 քմ մակերեսով բնակավայրի այլ հողամասի գործառական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հողամասի և քանի որ այդ հողամասը հնարավոր չէ օտարելու որպես առանձին գույքային միավոր, թույլատրել ողղակի վաճառքի կարգով, ընդլայնելու նպատակով օտարելու Արթուր Ղազարյանին:



3. Հողամասերի ուղղակի վաճառքի կարգով օտարման գները հաշվարկել նրանց կադաստրային արժեքների 100 %-ի չափով:

Ավետիսյան Հերմոն

Դերմոյան Արման

Թադևոսյան Արման

Հայրապետյան Ռուզան

Հովհաննիսյան Վազգեն

Մանուկյան Ժորա

Մելքոնյան Վանիկ

Նազարյան Գոռ

Վարդազարյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՂԵՏ՝





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 05  
«-----» ----- 2013թ.

23  
Թիվ -----

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ  
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի  
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի  
Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ և հիմք ընդունելով  
համայնքի ղեկավարի առաջարկությունը.


Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Թույլատրել կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու,  
սեփականության իրավունքով Արտաշատի քաղաքային համայնքին պատկանող,  
Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված  
սահմանափակումների ցանկում ընդգրկված, Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի  
թիվ 22 շենքի հարևանությամբ գտնվող 12 քմ մակերեսով հողամասը՝ ավտոմատ  
գանձման մեքենա /ԱԳՄ/ տեղադրելու համար:
2. Կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի գինը սահմանել նրա  
կադաստրային արժեքի 100 %-ի չափով:

Ավետիսյան Հերմոն  
Դերմոյան Արման  
Թադևոսյան Արման  
Հայրապետյան Ռուզան  
Հովհաննիսյան Վազգեն  
Մանուկյան Ժորա  
Մելքոնյան Վանիկ  
Նազարյան Գոռ  
Մանուկյան Վաչագան  
Կարամյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

*[Handwritten signature]*



Գ.ՍՈՒՐԱՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՍԱՐՁ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 05  
«-----» ----- 2013թ.

24  
Թիվ -----

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 38  
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 38 ԵՐԿՈՒ  
ՍԵՆՅԱԿԱՆՈՑ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՇՈՒՇԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՈՍԿԵՀԱՏ  
ԾԱՏՈՒԲՅԱՆԻՆ, ԳԵՂԱՄ ԾԱՏՈՒԲՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆՈՒԶԻ  
ԾԱՏՈՒԲՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆ ԾԱՏՈՒԲՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախկին քաղխորհրդի գործկոմի 3 մարտի 1981թ. թիվ 2 որոշմամբ Շուշիկ Սարգսյանի և Արմեն Ծատուրյանի ընտանիքին է հասկացվել և թիվ 001281 բնակարանային օրդերով ամրակցվել է Նար-Դոսի փողոցի թիվ 38 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 38 երկու սենյականոց բնակարանը:

Շուշիկ Սարգսյանի և Արմեն Ծատուրյանի ընտանիքը չի մասնակցել բնակարանների անհատույց սեփականաշնորհման գործընթացին, որի հետևանքով նրանց կողմից ներկայումս փաստացի զբաղեցրած Նար-Դոսի փողոցի թիվ 38 բնակելի շենքի թիվ 38 բնակարանը՝ „Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին, Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 29 հոդվածի հիման վրա հանձնվել է քաղաքային համայնքին, օրենքով սահմանված կարգով տնօրինելու համար:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ընդառաջելով Շուշիկ Սարգսյանի և Արմեն Ծատուրյանի կողմից քաղաքապետարան հասցեագրված 28.03.2012թ. թիվ Ս-369 դիմումին:

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսանում էր արտաշատ քաղաքի Նար-Դոսի փողոցի թիվ 38 բնակելի շենքի թիվ 38 երկու սենյականոց բնակարանը նվիրել Շուշիկ Սարգսյանին, Արմեն Ծատուրյանին, Շերամ Ծատուրյանին, Ոսկեհատ Ծատուրյանին, Արմենուհի Ծատուրյանին:



2. Ուժը կորցրած ճանաչել Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու  
05.06.2012թ. թիվ 27 որոշումը:

Ավետիսյան Հերմոն

Դերմոյան Արման

Թադևոսյան Արման

Հայրապետյան Ռուզան

Հովհաննիսյան Վազգեն

Մանուկյան Ժորա

Մելքոնյան Վանիկ


Նազարյան Գոռ

Վարդապարյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՂԵՏ՝

*Գր. Բաբայան*





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 05  
«-----» ----- 2013թ.

25  
Թիվ -----

„ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ  
ԸՄԲԵՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ,,  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝  
-----

1. „Արտաշատ քաղաքի օլիմպիական հերթափոխի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել „Արտաշատ քաղաքի Ռազմիկ Գոլեցյանի անվան ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության:
2. Հաստատել կանոնադրությունը կապված անվանափոխության հետ:

Ավետիսյան Հերմոն  
Դերմոյան Արման  
Թադևոսյան Արման  
Հայրապետյան Ռուզան  
Հովհաննիսյան Վազգեն  
Մանուկյան Ժորա  
Մելքոնյան Վանիկ  
Նազարյան Գոռ  
Վարդապարյան Վաչագան  
Մարտիրոսյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 05  
«-----» ----- 2013թ.

26  
Թիվ -----

„ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ, ՀՈԱԿ-Ի ՍԱՆԵՐ ԹԱՄԱՐԱ ԵՎ ԹԻՆԱ ԶԱՎԵՆԻ ԹՈՎՄԱՍՅԱՆՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻՑ ԱԶՏՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Արտաշատ քաղաքի Արագի փողոցի թիվ 39 շենքի թիվ 47 բնակարանի բնակչուհի Լուսինե Թովմասյանի ընտանիքի սոցիալապես անապահով վիճակը և ընդառաջելով նրա խնդրանքին.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել „Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ, ՀՈԱԿ-ի սաներ՝ Թամարա /ծնվ. 14.09.2007թ./ և Թինա /ծնվ. 14.09.2007թ./ Չավենի Թովմասյաններին ազատել ծնողական վարձավճարներից, մինչև դպրոց հաճախելը, սկսած ս/թ մայիս ամսից:

Ավետիսյան Հերմոն

Դերմոյան Արման

Թադևոսյան Արման

Հայրապետյան Ռուզան

Հովհաննիսյան Վազգեն

Մանուկյան Ժորա

Մելքոնյան Վանիկ


Նազարյան Գոռ

Վարդազարյան Վահագն

Վարդանյան Լուսինե

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

*[Handwritten signature]*  
Գ.ՍՈՒՐԱՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 05  
«-----» ----- 2013թ.

27  
Թիվ -----

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՋԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 35 ՇԵՆՔԻ ԹԻՎ 21  
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒՅԻ ՇՈՂԻԿ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԹՈՌ՝  
ՆԱՐԵԿ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ „ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ ՀԱՃԱԽԵԼՈՒ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ  
ՎԱՐՁԱՎՃԱՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Արտաշատ քաղաքի Արազի փողոցի թիվ 35 շենքի թիվ 21  
բնակարանի բնակչուհի Շողիկ Ռուշանյանի /երրորդ կարգի հաշմանդամ/  
սոցիալապես անապահով վիճակը և ընդառաջելով նրա խնդրանքին.


Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել Արտաշատ քաղաքի Արազի փողոցի թիվ 35 շենքի թիվ 21  
բնակարանի բնակչուհի Շողիկ Ռուշանյանի թոռ՝ Նարեկ Ռուշանյանին /ծնվ.  
02.01.2009թ./ հաճախել „Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ,, ՀՈԱԿ և  
ազատել ծնողական վարձավճարից, մինչև դպրոց հաճախելը, սկսած ա/թ մայիս  
ամսից:

Ավետիսյան Հերմոն  
Դերմոյան Արման  
Թադևոսյան Արման  
Հայրապետյան Ռուզան  
Հովհաննիսյան Վազգեն  
Սանուկյան Ժորա  
Մելքոնյան Վանիկ  
Նազարյան Գոռ  
Վարդանյան Կարսազան  
Վարդանյան Բազումի

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

*Գ. Սողոմոնյան*



Գ. ՍՈՒՐՄԱՅԵՐ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 05  
«-----» ----- 2013թ.

28  
Թիվ -----

„ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ԵՎ „ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԽՄԲԵՐ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով „Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ,, և „Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների թվի աճը և հաշվի առնելով մանկապարտեզների տնօրեններ Ա.Ղազարյանի 16.04. 2013թ. թիվ 312 և Կ.Մխիթարյանի 11.04.2013թ. թիվ 301 գրությունները.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել „Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ,, և „Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ներից յուրաքանչյուրում 2013թ. մայիս ամսից բացելու մեկական նոր խումբ:

Ավետիսյան Հերմոն  
Դերմոյան Արման  
Թաղևոսյան Արման  
Հայրապետյան Ռուզան  
Հովհաննիսյան Վազգեն  
Մանուկյան Ժորա  
Մելքոնյան Վանիկ  
Նազարյան Գոռ  
Վարդազարյան Վաչագան  
Վարդանյան Լուսինիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 05  
«-----» ----- 2013թ.

29  
թիվ -----

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԶԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 45 ՇԵՆՔԻ ԹԻՎ  
29 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ  
ԱՎՏՈԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով Արցախյան ազատամարտի մասնակից, 2-րդ կարգի հաշմանդամ Արտակ Նիկողոսյանի սոցիալական ծանր վիճակը և ընդառաջելով նրա խնդրանքին.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արտաշատ քաղաքի Արազի փողոցի թիվ 45 շենքի թիվ 29 բնակարանի բնակիչ Արտակ Նիկողոսյանին տալ ավտոգույքահարկի արտոնություն 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամի չափով:

Ավետիսյան Հերմոն  
Դերմոյան Արման  
Թադևոսյան Արման  
Հայրապետյան Ռուզան  
Հովհաննիսյան Վազգեն  
Մանուկյան Ժորա  
Մելքոնյան Վանիկ  
Նազարյան Գոռ  
Վարդազարյան Վաչագան  
Վարդանյան Էմմա

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

